<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ԳԼԱՁՈՐԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ

ՀՀ, Վայոց Ձորի մարզի Գլաձոր բնակավայր

Գլաձոր բ/, 33 փ. 2-րդ փակուղի ,2 –րդ շենք

gladzorpartez@inbox.ru

Հեռ. /37400281/2 30 11

Շամս Գրուպ ՍՊԸ-ի տնօրեն
Մ. Սլոյան

ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ԼՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Տեղեկացնում ենք, որ 2022 թվականի փետրվարի 27-ին ,ՀՀ ՎԶՄ Եղեգնաձոր համայնքի Գլաձոր բնակավայրի մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպության և ,Շամս Գրուպ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև կնքվել է ապրանքի մատակարարման ՎԶՄ-ԳՀՄՀ-ԳՀԱՊՁԲ-22/Ս Պայմանագիրը, համաձայն որի Դուք ստանձնել եք պարտավորություն պատշաճ կերպով մատակարարել սննդամթերքի այն չափաբաժինները, որոնցով հաղթող եք ճանաչվել նախապես հայտարարված գնման ընթացակարգի ժամանակ:

Սակայն պայամանգրի ուժի մեջ մտնելու օրվանից առ այսօր ,ՀՀ ՎԶՄ Եղեգնաձոր համայնքի Գլաձոր բնակավայրի մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը որևէ սնունդ չի առաքվել, Ձեր կողմից չի կնքվել մատակարարման համաձայնագիր, Ձեր կողմից աղերսված լրացուցիչ ժանկետները Ձեր անպատասխանատու և ապօրինի աշխատանքի հետևանքով թողնվել են անհետևանք՝ մանկահասակ երեխաների միջազգային և սահմանադրական իրավունքների կոպիտ խախտումով:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կկիրառվի Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված ,Գնումների գործընթացի կազմակերպմանե կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Հաշվի առնելով վերոգրյալը, հիմք ընդունելով ՎԶՄ-ԳՀՄՀ-ԳՀԱՊՁԲ-22/Ս պայմանագրի 2.1.7 կետը մենք որպես գնորդ միակողմանի լուծում ենք պայմանագիր: Միաժամանակ տեղեկացնում ենք, որ ձեռնարկվելու են պայմանագրով և հրավերով նախատեսված համապատասխան միջոցներ՝ պայմանագիրը միակողմանի լուծելու արդյունքում առաջացած Ձեր պարտավորությունների կատարման համար:

Ձեր ընկերության կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները կից վճարման պահանջագրերի հետ միասին, սահմանված կարգով, կներկայացվեն

ընկերությանը սպասարկող բանկ՝ տուժանքի մասին համաձայնագրով· սահմանված գումարները ,ՀՀ ԿՁՄ Եղեգնաձոր համայնքի Գլխավոր բնակավայրի մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաշվեհամարին փոխանցելու համար:

,ՀՀ ԿՁՄ Եղեգնաձոր համայնքի Գլխավոր բնակավայրի մանկապարտեզ ՀՈԱԿ-ի տնօրեն՝ Ի.Նազարյան